

<https://doi.org/10.59546/18290744-2023.10-12-152>

ԻՆԳԱ ԱՎԱԳՅԱՆ

*«Մասնավոր իրավական կենտրոն» փաստաբանական  
գրասենյակի հիմնադիր-տնօրեն, փաստաբան*

INGA AVAGYAN

*“Private Legal Center” Law Firm, Founding Director,  
Advocate*

ИНГА АВАГЯН

*учредитель и директор юридической фирмы  
«Частный юридический центр», адвокат*

## **ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՊԱՑՈՒՅՑ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

### **EXPERT’S CONCLUSION AS EVIDENCE IN THE RA CRIMINAL LEGAL PROCEEDINGS**

### **ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТА КАК ДОКАЗАТЕЛЬСТВО В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

#### **Ներածություն**

Արդարադատության արդյունավետ իրականացման կարևորագույն գրավականներից է ապացուցման գործընթացում հատուկ գիտելիքների ճիշտ և ռացիոնալ օգտագործումը: Հատուկ գիտելիքների կիրառման դատավարական եղանակներից ավանդականը դատական փորձաքննությունների նշանակումն ու կատարումն է:

Դատական փորձաքննությունների հիմնախնդիրներն ուսումնասիրվում են գիտական ամենատարբեր հետաքրքրությունների տեսանկյունից՝ հիմքում ունենալով գիտության որոշակի ճյուղի ուսումնասիրության առարկայի շրջանակներն ու առանձնահատկությունները:

Դատական փորձաքննությունների տարբեր հիմնախնդիրներն ուսումնասիրելով գիտության ճյուղերի ու տեսությունների շարքում, թերևս, կարելի է առանձնացնել դատական փորձագիտական տեսության և իրավագիտության դերն ու հիմնարար նշանակությունը: Այս տեսանկյունից՝ փորձաքննության ինստիտուտը մի կողմից ուսումնասիրվում է որպես գիտական հետազոտության տարատեսակ, իսկ մյուս կողմից՝ որպես դատավարական ինստիտուտ:

Առաջին դեպքում այն դատական փորձագիտության տեսության ուսումնասիրության առարկա է, իսկ երկրորդ դեպքում՝ դատավարական իրավունքի գիտության ուսումնասիրության առարկա:

Սույն աշխատության մեջ վերլուծության ենթ ենթարկելու փորձագետի եզրակացությունը քրեական դատավարությունում՝ որպես ապացույցի տեսակի և դրա կարևորության մասին:

Հարկ է նկատել, որ աշխատանքում որոշակի հիմնախնդիրներ ներկայացված են նախադեպային իրավունքի համատեքստում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

## **Հիմնական հետազոտություն**

### **1. Դատական փորձաքննության հասկացությունը և նպատակները**

Փորձաքննությունը գիտական հետազոտության տարատեսակ է, որը քրեական դատավարությունում ուղղված է հատուկ գիտելիքների կիրառմամբ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալների տրամադրմանը:

«Փորձաքննություն» եզրույթն առաջացել է լատիներեն «expertus» բառից, որը նշանակում է փորձառու, իրազեկ: Իսկ «peritus»՝ լատիներենից թարգմանաբար նշանակում է իրավասու, ձեռնահաս, որոշակի ոլորտում փորձ ունեցող անձ:

Փորձագիտական գործունեության նպատակը վարույթն իրականացնող մարմնի որոշակի փաստական տվյալներով ապահովելն է, որոնք որոշակի պահանջների բավարարման դեպքում ճանաչվում են որպես ապացույցներ և դրվում գործով կայացվող այս կամ այն որոշման հիմքում:

Այս տեսանկյունից փորձագիտական գործունեությունը սերտորեն կապված է ապացուցման գործընթացի, այն է՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելու, ստուգելու և գնահատելու հետ, որն իրականացվում է հատուկ գիտելիքների կիրառմամբ՝ փորձագիտական եզրակացություն տալու միջոցով:

Մասնագիտական գրականության մեջ «դատական փորձաքննություն» հասկացության վերաբերյալ առկա են տարբեր մոտեցումներ: Որոշ հեղինակներ այն բնութագրում են որպես հետազոտություն, որն իրականացնում է փորձագետը՝ հատուկ գիտելիքների հիման վրա<sup>1</sup>, իսկ ոմանց կարծիքով էլ՝ հատուկ դատավարական գործողությունների համակցություն է <sup>2</sup>:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ «1. Փորձաքննություն կատարվում է, երբ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու նպատակով անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառում, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառում հատուկ գիտելիքներ:

2. Փորձաքննությունը կատարվում է անկախ վարույթին ներգրավված այլ անձանց մոտ հատուկ գիտելիքների առկայությունից:

3. Անչափահաս տուժողի կամ վկայի նկատմամբ փորձաքննություն կատարվում է միայն նրա օրինական ներկայացուցչի համաձայնությամբ, բացառությամբ սույն օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված դեպքերի»:

Փաստորեն՝ օրենսդիրն առանձնացրել է ոչ միայն փորձաքննության բուն նպատակը, այլև՝ դրա կատարման սահմանները, որոնք համահունչ են սահմանված նպատակին, ինչը, կարծում ենք, միանգամայն արդարացված է: Ինչ վերաբերում է փորձաքննության կատարման հիմքերին, ապա նույն օրենսգրքի 253-րդ հոդվածը, որը վերնագրված է «Փորձաքննու-

<sup>1</sup> Տե՛ս *Давтян А. Г.*, Экспертиза в гражданском процессе, М., 1995, էջ 17:

<sup>2</sup> Տե՛ս *Саханов Т. В.*, Судебные доказательства, М., 2000, էջ 14:

թյուն կատարելու հիմքը», 1-ին մասում սահմանում է, որ փորձաքննությունը կատարվում է քննիչի որոշման հիման վրա:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է նախևառաջ պարզաբանել փորձագիտական հետազոտության ընթացքում կիրառվող հատուկ գիտելիքների հասկացությունն ու բովանդակությունը, ինչպես նաև փորձաքննության նպատակը, խնդիրները, օբյեկտներն ու առարկան:

Այս կամ այն փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ է հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող անձինք՝ փորձագետներ, որոնք կարող են «օգտագործելով» իրենց մասնագիտական գիտելիքները՝ հանգել որոշակի հարցերի պարզաբանման՝ հիմնավորման, որն առաջադրել է վարույթն իրականացնող մարմինը:

Մի շարք հեղինակներ կարծում են, որ «հատուկ գիտելիքներ» եզրույթի օգտագործումն առավել ընդունելի է և ճիշտ:

Դատական փորձագիտության տեսության և կրիմինալիստիկայի գիտության մեջ հիմնարար է համարվում Ա. Ա. Էյսմանի այն ձևակերպումը, որ հատուկ գիտելիքները սահմանվում են որպես գիտելիքներ, որոնց չեն տիրապետում ապացուցման հասցեատերը. «Այդ գիտելիքները հանրաճանաչ, հանրամատչելի չեն և չունեն լայն տարածում ... »:

Այնուամենայնիվ, պարզ չէ, թե ինչ կարելի է հասկանալ՝ «ոչ հանրաճանաչ, ոչ հանրամատչելի և զանգվածային տարածում չունեցող գիտելիքներ» ասելով, և որոնք են դրանց սահմանազատման չափանիշները: Այս կապակցությամբ միանգամայն ընդունելի է Ա. Չախոյանի այն տեսակետը, ըստ որի՝ բոլոր դեպքերում «հատուկ գիտելիքը»՝

- չի կարող լինել քրեական և քրեադատավարական գիտելիքը,
- չի կարող հանդիսանալ հանրահայտ կամ հանրամատչելի գիտելիքը,
- մարդու մասնագիտական պատրաստվածության և մասնագիտական փորձի արդյունք է,
- այն կիրառվում է քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով՝ ապացուցողական կամ կողմնորոշիչ տեղեկություններ ստանալու նպատակով:

Ելնելով տարբեր հեղինակների կարծիքների և ՀՀ քրեադատավարական օրենսդրության նորմերի ընդհանուր վերլուծությունից՝ պարզ է դառնում, որ հատուկ գիտելիքներն իրավագիտության շրջանակից դուրս գիտելիքներ են, և քրեական դատավարության շրջանակում վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա այս կամ այն հանգամանքը պարզելու նպատակով նեղ մասնագետների գիտելիքները «օգտագործվում» են և որպես առանձին փաստաթուղթ՝ ապացույց, գնահատման են հանձնում վարույթն իրականացնող մարմնին, որն էլ իր հերթին կարող է առանցքային նշանակություն ունենալ:

Դատական փորձաքննությունն ապացուցման գործուն միջոց է, քանի որ այն վարույթն իրականացնող մարմնին հաղորդում է գիտահետազոտական բնույթի տեղեկատվություն՝ գործի նյութերը հատուկ գիտելիքների կիրառմամբ հետազոտելու արդյունքում: Այս առումով փորձագետի եզրակացությունը, ըստ առաջացման աղբյուրի, խառն ապացույց է, քանի որ այն ձևավորվում է փորձագետի մասնակցությամբ՝ նրա հատուկ գիտելիքների կիրառմամբ և գործի նյութերի օգտագործմամբ:

Փորձաքննության նշանակման և կատարման յուրահատուկ բնույթն ու բովանդակությունը պայմանավորված է այս քննչական գործողության քրեադատավարական կարգավորման առանձնահատկություններով. այն նշանակում է վարույթն իրականացնող մարմինը, սակայն կատարում է փորձագետը: Թեև փորձաքննության կատարման ընթացքում վարույթն իրականացնող մարմինը նույնպես օժտված է որոշակի իրավունքներով, այնուամենայնիվ վերջինս

չի կարող փոխարինել փորձագետին, առավել ևս՝ միջամտել նրա գործունեությանը: Այսինքն՝ այս քննչական գործողությունն ունի երկու բաղադրիչ, որոնցից յուրաքանչյուրն անմիջակա- նորեն իրականացում են քրեադատավարական տարբեր սուբյեկտներ, սակայն դրա միաս- նական արդյունքում ձևավորվում է առանձին տեսակի դատական ապացույց՝ փորձագետի եզրակացություն:

Այս իմաստով միանգամայն տրամաբանական է նաև, որ օրենսդիրը մինչև քրեական գործի հարուցումը նախատեսում է այնպիսի քննչական գործողությունների կատարումը, ինչ- պիսիք են՝ դեպքի տեղի զննությունը և նմուշների ստացումը, քանի որ դրանք փորձաքն- նության կատարման համար ապահովում են անհրաժեշտ ելակետների ստացումը: Միևնույն ժամանակ, այս քննչական գործողությունների կատարման ընթացքում առավել է ընդգծվում հատուկ կամ մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կիրառման անհրաժեշտու- թյունը:

Ինչ վերաբերվում է մասնագետին, ապա վերջինս հետազոտություն չի իրականացնում և եզրակացություն չի տալիս, այլ որևէ բնագավառում իր ունեցած հմտություններով և գիտելիք- ներով աջակցում է վարույթն իրականացնող մարմնին այս կամ այն քննչական կամ դատա- վարական գործողություններ կատարելիս:

Այլ խոսքով՝ վերջինիս կողմից տրվող կարծիքը ոչ թե հետազոտության արդյունք է, այլ կոնկրետ հարցի վերաբերյալ մասնագիտական գիտելիքների կամ փորձի վրա հիմնված դիր- քորոշում, ուստի պատահական չէ, որ օրենքով մասնագետի կարծիքը չի դիտվում որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, և չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը: Այն վարույթն իրականացնող մարմնի համար կարող է ունենալ ուղղորդող, խորհրդատվական նշանակություն<sup>3</sup>:

## **2. Փորձագետի եզրակացությունը՝ ապացույցի տեսակ**

«Քրեական դատավարության օրենսգրքում, ի թիվս այլի, որպես ապացույցներ են փորձագետի եզրակացությունը, կարծիքը, ցուցմունքը, ինչը կապված է փորձագետի՝ որպես քրեական դատավարության սուբյեկտի դատավարական վիճակի որոշակի փոփոխության հետ:

Քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների պարագայում մաս- նագետի կարծիքը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը:

Փորձագիտական եզրակացության ընթացքն ու արդյունքներն ամրագրվում են փորձա- գետի եզրակացության մեջ:

Նշված հարցին անդրադարձել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը, որը, վերլուծելով քրե- ական դատավարությամբ սահմանված նորմերը, արձանագրել է՝ «Փորձագետի եզրակացու- թյունն իրենից ներկայացնում է գրավոր շարադրված հետևություններ, որտեղ փորձագետը հատուկ գիտելիքների կիրառմամբ կատարված հետազոտությունների հիման վրա պատաս- խանում է վարույթն իրականացնող մարմնի առաջադրած հարցերին»:

Փորձաքննության արդյունք հանդիսացող փորձագիտական եզրակացությունը՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, գնահատում է վարույթն իրականացնող մարմինը՝ առաջ- նորդվելով ապացույցների գնահատման ընդհանուր կանոններով:

«Քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր

<sup>3</sup> Արտեմ Արմենի Հարությունյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ3/ 0226/01/14 որոշում:

ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

Հարկ է նշել, որ «ապացույցի գնահատում» հասկացության և դրա բովանդակության վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Այսպես՝ Ռ. Ս. Բելկինն ապացույցների գնահատումը բնութագրում է որպես մտավոր տրամաբանական գործընթաց, որն ուղղված է որոշել ապացույցների թույլատրելիությունն ու վերաբերելիությունը, դրանց միջև կապի առկայությունը և այդ կապի բնույթը, ապացույցների նշանակությունն ու ճշմարտության բացահայտման գործում դրանց օգտագործման հնարավորությունները<sup>4</sup>:

Մեկ այլ սահմանման համաձայն՝ փորձագետի եզրակացության գնահատումը ենթադրում է որոշակի գործով վարույթն իրականացնող մարմնի ներքին համոզմունքի ձևավորում՝ եզրակացության գիտական հիմնավորվածության և արժանահավատության, ինչպես նաև դրանում արված հետևությունների ապացուցողական նշանակության վերաբերյալ<sup>5</sup>:

Հաշվի առնելով մասնագիտական գրականության մեջ արտահայտված կարծիքները՝ փորձագետի եզրակացության գնահատումը կարելի է սահմանել որպես հետաքննության մարմնի, քննիչի, դատարանի կամ դատախազի մտավոր տրամաբանական գործունեություն, որով գնահատող սուբյեկտի մեջ ձևավորվում է ներքին համոզմունք եզրակացության թույլատրելիության, վերաբերելիության, արժանահավատության, գիտական հիմնավորվածության վերաբերյալ, որոնց հիման վրա հետևություններ են արվում գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման համար փորձագետի եզրակացության մեջ շարադրված փաստական տվյալների դերի ու նշանակության մասին:

Փորձագետի եզրակացության գնահատման հարցում հատկապես կարևոր նշանակություն ունի գնահատող սուբյեկտի մեջ ներքին համոզմունքի ձևավորումը:

Մասնագիտական գրականության մեջ ներքին համոզմունքը դիտվում է որպես ապացույցների գնահատման մեթոդ, հնարք, սկզբունք, որպես գնահատման չափանիշ կամ արդյունք<sup>6</sup>:

Ընդ որում՝ այս կամ այն անհայտ փաստը փորձագետը պարզում է իրեն հայտնի այլ փաստերի հետազոտությամբ՝ իր ներքին համոզմունքին համապատասխան<sup>7</sup>:

Վարույթն իրականացնող մարմինն իր հերթին ներքին համոզման է գալիս փորձագետի եզրակացությունը գործով որպես ապացույց օգտագործելու վերաբերյալ: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանը Ա. Ավագյանի և Վ. Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմամբ վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը դիտում է որպես «ապացույցների բավարարության» որոշման չափանիշ:

Այնուհետև, վերը նշված մոտեցման համատեքստում Արայիկ Խաչատրյանի գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԿԴ1/0006/01/14 որոշման մեջ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ապացույցի առանձին տեսակի՝ փորձագետի եզրակացության գնահատելու խնդրին:

Նշված գործով Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումն այն է, որ «... փորձագետի եզրակացությունն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս վարույթն իրա-

<sup>4</sup> Տե՛ս *Белкин Р. С.*, Собрание, исследование и оценка доказательств. М., 1966, էջ 65:

<sup>5</sup> Տե՛ս «Судебно-почерковедческая экспертиза». М., 1971, էջ 314:

<sup>6</sup> Մանրամասն տե՛ս *Новик В. В.*, Криминалистические аспекты доказывания по уголовным делам: проблемы теории и практики. СПб., 2005, էջ 354-365:

<sup>7</sup> Տե՛ս *Соколовский З. М.*, Оценка заключений криминалистической экспертизы письма, М., 1959, էջ 13:

կանացնող մարմինը, ի թիվս այլնի, պետք է հաշվի առնի օրենքով փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջների պահպանվածությունը: Փորձագետի եզրակացությունում կատարված հետազոտությունների ողջ ընթացքն ու արդյունքները պետք է շարադրվեն ամբողջական և հնարավորին չափ մանրամասն, կատարված հետազոտությունների և հետևությունների միջև պետք է առկա լինի տրամաբանական կապ, բացառվեն իմաստային հակասությունները: Միայն այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կունենա հասկանալու հետազոտության էությունը և պատշաճ գնահատելու դրա արդյունքները: Միևնույն ժամանակ այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը չի համապատասխանում նշված պահանջներին, օրենսդիրը, հիմք ընդունելով փորձագետի եզրակացության՝ որպես որոշակի հանգամանքներ հաստատելու համար թույլատրելի ապացույցի անփոխարինելիությունը, վարույթն իրականացնող մարմնին օժտել է այդ պահանջների պահպանումն ապահովելու այնպիսի լծակներով, ինչպիսիք են լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելը, փորձագետի հարցաքննելը<sup>8</sup>:

Պետք է նկատել, որ մասնագիտական գրականության մեջ փորձագետի եզրակացության գնահատման վերաբերյալ օգտագործվում են տարբեր եզրույթներ, մի դեպքում խոսվում է եզրակացության գնահատման «տարրերի», մեկ այլ դեպքում՝ գնահատման «չափանիշների», երրորդ դեպքում՝ փորձագետի եզրակացության գնահատման «տեսակետների» մասին:

Ընդ որում, երբեմն նշված եզրույթները միաժամանակ օգտագործվում են փորձագետի եզրակացության գնահատման ենթակա միևնույն հատկանիշը մատնանշելու համար:

Առանձնացնելով յուրաքանչյուրի բովանդակությունը՝ հետևություն ենք անում, որ փորձագետի եզրակացության գնահատման «տարրերը» եզրակացության՝ գնահատման ենթակա այն հատկանիշները կամ կողմերն են, որոնց միաժամանակյա առկայությունը պարտադիր է փորձագետի եզրակացությունը գործով որպես ապացույց օգտագործելու համար: Այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայությունը հանգեցնում է փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակության կորստին:

Փորձագետի եզրակացության գնահատման «չափանիշները» գիտությամբ և պրակտիկայով մշակված այն կողմնորոշիչներն են, որոնց վրա հիմնվելով՝ վարույթն իրականացնող մարմինը ձևավորում է ներքին համոզմունք փորձագետի եզրակացության այս կամ այն տարրի առկայության կամ բացակայության մասին:

Մասնագիտական գրականության մեջ շատ դեպքերում փորձագետի եզրակացության գնահատման տարրերն ու չափանիշները չեն տարանջատվում, ներկայացվում են միասնաբար թվարկմամբ:

Ե. Գալյաշինան փորձագետի եզրակացության գնահատման գործընթացում առանձնացնում է գնահատման ենթակա հետևյալ տարրերը.

1. փորձաքննություն նշանակելու և կատարելու դատավարական կարգը,

<sup>8</sup> Հիմք ընդունելով այս իրավական վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տուժողի՝ գործի համար էական նշանակություն ունեցող փաստերն ընկալելու և դրանք վերարտադրելու ունակությունը պարզելու համար նշանակված դատահոգեբանական-դատահոգեբուժական համալիր փորձաքննության եզրակացության մեջ առկա են անհստակություններ, հակասություններ, իսկ ստորադաս դատարանները դրանք վերացնելուն ուղղված միջոցներ չեն ձեռնարկել, ուստի որոշել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության՝ ձեռնարկելու համար նաև օրենքով նախատեսված համապատասխան միջոցներ (փորձագետի հարցաքննություն կամ լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության նշանակում)՝ որոշմամբ արձանագրված հակասությունները վերացնելու համար (մանրամասն տես «Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ», հատոր 3-րդ, Եր., 2016, էջ 316-317):

2. փորձագետի եզրակացությունը կազմելու ճշտությունը և դրա մեջ օրենքով նախատեսված բոլոր ռեկվիզիտների առկայությունը,
3. փորձագետի ձեռնհասությունը,
4. գործի ելքով փորձագետի շահագրգռվածությունը,
5. հետազոտության ներկայացված օբյեկտների ձեռքբերման և պահպանման դատավարական կարգի պահպանումը,
6. փորձագետի եզրակացության արժանահավատությունը, դրանում շարադրված հետևությունների գիտական հիմնավորվածությունը, պատճառաբանվածությունը, հետևությունների համապատասխանությունը կատարված հետազոտություններին, կիրառված մեթոդիկաների արժանահավատությունը և մեթոդների հիմնավորվածությունը,
7. գիտական հիմնավորվածության ստուգումը, որը ենթադրում է հետևությունների տրամաբանական կապը կատարված հետազոտությունների հետ,
8. փորձագետին ներկայացված նյութերի ամբողջականությունը<sup>9</sup>:  
Այլ հեղինակներ փորձագետի եզրակացության գնահատումը բաժանում են երկու փոխկապակցված մասերի՝
  1. փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության, պատճառաբանվածության, նրա հետևությունների մանրամասն, բազմակողմանի և օբյեկտիվ ստուգումը,
  2. փորձագետի եզրակացության մեջ շարադրված փաստերի ապացուցողական նշանակության որոշումը, գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ դրանց կապի և հարաբերության պարզումը<sup>10</sup>:  
Գտնում են, որ անհրաժեշտ է տարանջատել փորձագետի եզրակացության գնահատման ենթակա տարրերը և յուրաքանչյուր տարրի համար առանձնացնել դրա գնահատման համապատասխան չափանիշները:  
Այս տեսակետից փորձագետի եզրակացության գնահատումը ներառում է գնահատման ենթակա երեք հիմնական տարրերի ամբողջություն՝
    - ա. փորձաքննությունը նախապատրաստելու, նշանակելու և կատարելու դատավարական կարգի պահպանման գնահատումը,
    - բ. եզրակացության արժանահավատության և գիտական հիմնավորվածության գնահատումը,
    - գ. եզրակացության մեջ շարադրված փաստերի՝ որպես ապացույցների վերաբերելիության, եզրակացության դերի և նշանակության գնահատումը գործով ձեռք բերված այլ ապացույցների շարքում:  
Այս տարրերից յուրաքանչյուրն ունի դրա բովանդակությունը կազմող որոշակի չափանիշների համակարգ, որոնց գնահատմամբ որոշվում են փորձագետի եզրակացության վերը թվարկված տարրերի բովանդակությունը, դրանց առկայությունը կամ բացակայությունը և, ի վերջո, դրանց ապացուցողական նշանակությունն ու գործով կայացվող որոշման հիմքում դնելու հարցը:  
Ընդ որում, այդ տարրերը սերտորեն փոխկապակցված և փոխապայմանավորված են, և դրանցից մեկի գնահատման արդյունքներն ազդում են մյուսի գնահատման արդյունքների վրա:  
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայում փորձագետի եզրա-

<sup>9</sup> Տե՛ս *Галяшина Е. И.*, Назначение, производство и оценка заключения судебной экспертизы // [http://www.rusexpert.ru/books/cena\\_slova3/029.htm](http://www.rusexpert.ru/books/cena_slova3/029.htm) (20.04.2010):

<sup>10</sup> Տե՛ս «Судебно-почерковедческая экспертиза», էջ 314:

կացության գիտական հիմնավորվածության և դրա գնահատման միջազգային իրավական երաշխիքը դիտվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ արդար դատաքննության իրավունքի շրջանակում:

Այդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

ՄԻԵԴ-ն իր մի շարք որոշումներ հատուկ նշել է, որ անկողմնակալ փորձագետի գիտականորեն հիմնավորված փորձագիտական եզրակացությունը յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքի մաս է <sup>11</sup>:

Հանցագործությունների քննության գործընթացում փորձագետի եզրակացության դերն ու նշանակությունը որոշելու համար անհրաժեշտ է քննարկել դրա՝ գնահատման ենթակա տարրերի և չափանիշների բովանդակությունը և դրանց նշանակությունը: Ինչպես արդեն նշել ենք, փորձագետի եզրակացության՝ գնահատման ենթակա առաջին տարրը փորձաքննությունը նախապատրաստելու, նշանակելու և կատարելու դատավարական կարգի պահպանման գնահատումն է:

Այն, ըստ էության, բխում է ապացույցների թույլատրելիության օրենսդրական ընդհանուր պահանջից, մասնավորապես՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթից, որն արգելում է հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումը:

Ապացույցի ձեռքբերման դատավարական կարգի պահպանվածության՝ փորձագետի եզրակացության թույլատրելիության տեսանկյունից ստուգվում է, թե արդյոք փորձագետ է նշանակվել համապատասխան բնագավառում ձեռնհաս և գործով չչափազորված անձը, չկան արդյոք փորձագետին բացարկ հայտնելու հիմքեր, պահպանվել է փորձաքննություն նշանակելու և կատարելու դատավարական կարգը, փորձագետին բացատրվել են արդյոք նրա իրավունքներն ու պարտականությունները, փորձագետը նախազգուշացվել է եզրակացություն տալուց հրաժարվելու, խուսափելու կամ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին, փորձագետի եզրակացության կառուցվածքն ու բովանդակությունը համապատասխանում է արդյոք քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջներին և այլն:

Այս և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ դրույթները փորձագետի եզրակացության թույլատրելիության գնահատման հիմքերն են, և դրանք չպահպանելը հանգեցնում է փորձագետի եզրակացությունը գործով որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիությանը:

Փորձագետի եզրակացության թույլատրելիությունը գնահատելիս պետք է ստուգել նաև, թե փորձագիտական հետազոտության ներկայացված օբյեկտները, համեմատական նմուշները կամ այլ նյութերը ձեռք բերելիս պահպանվել են արդյոք քրեադատավարական օրենսդրության պահանջները և այդ նմուշները կարող են արդյոք գործով օգտագործվել որպես թույլատրելի ապացույցներ:

<sup>11</sup> Մանրամասն տե՛ս նաև Դ. Մելքոնյան, Ապացույցների թույլատրելիության եվրոպական չափանիշները, «Պետություն և իրավունք», № 4 (42), 2008, էջ 14-19:



Խոսքը մասնավորապես վերաբերում է «թունավորված ծառի պտուղների մասին» հայտնի կանոնին, որի համաձայն՝ օրենքի խախտմամբ կատարված քննչական գործողության դեպքում պետք է անթույլատրելի ճանաչել ոչ միայն տվյալ քննչական գործողության արձանագրությունը, այլև դրա ընթացքում ձեռք բերված բոլոր նյութերն ու դրանց արձանագրությունը, այլև դրա ընթացքում ձեռք բերված բոլոր նյութերն ու հետազոտման արդյունքները:

Օրինակ՝ անթույլատրելի պետք է ճանաչել ոչ միայն օրենքի խախտմամբ կատարված խուզարկության կամ առգրավման արձանագրությունը և դրանով ձեռք բերված իրեղեն ապացույցները, այլ նաև դրանց փորձագիտական հետազոտությամբ փորձագետի տված եզրակացությունը:

Կամ՝ անթույլատրելի է ոչ միայն բռնությամբ, սպառնալիքով կամ խաբեությամբ համեմատական հետազոտության համար ձեռք բերված նմուշների, այլ նաև դրանց կապակցությամբ փորձագետի տված եզրակացության օգտագործումը որպես ապացույց և այլն:

Ճիշտ է «թունավորված ծառի պտուղների մասին» կանոնը չի ամրագրվել քրեական դատավարության օրենսգրքում, սակայն պրակտիկայում այն լայնորեն կիրառվում է:

Օրինակ՝ Վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում, կասկածի տակ դնելով դատաքիմիական փորձաքննության եզրակացության արժանահավատությունը նշում է՝ «Ինչ վերաբերում է փորձագետի կողմից անձամբ ավտոմեքենայից վերցված մանրաթելի նմուշին, որը նույնացվել է տուժողի հագուստի մանրաթելերի հետ, ապա պետք է քննարկման առարկա դարձվի այն հարցը, թե ավտոմեքենայից նմուշ վերցնելիս արդյոք պահպանվել են քրեական դատավարության օրենսգրքով սահմանված հետազոտման համար նմուշներ ստանալու վերաբերյալ օրենսդրության պահանջները և ըստ այդմ որոշել փորձաքննության եզրակացության այդ մասը մեղադրող ապացույց դիտելու կամ չդիտելու հարցը<sup>12</sup>:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով քրեադատավարական օրենքի էական խախտմամբ կատարված քննչական գործողությունից բխող ապացույցների թույլատրելիության հարցին, վերը վկայակոչված՝ Արմեն Սեյրանի Սարգսյանի վերաբերյալ որոշման մեջ ձևավորել է այն իրավական դիրքորոշումը, որ «օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցի» ներքո անհրաժեշտ է հասկանալ նաև այն ապացույցները, որոնք ձեռք են բերվել թեկուզ առանց օրենքի խախտման, սակայն օրենքի խախտմամբ կատարված քննչական կամ դատավարական գործողությամբ կամ այն ապացույցների հիման վրա, որոնք ձեռք էին բերվել օրենքի խախտմամբ կամ անթույլատրելի ապացույցի հետ գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը հաստատել է ՀՀ ներպետական իրավունքում «թունավոր ծառի պտուղների» կանոնի առկայությունը<sup>13</sup>:

Նշված կանոնն իր կիրառությունն է գտել նաև ՀՀ դատական պրակտիկայում:

Այսպես, ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը Մ. Օհանյանի գործով դատավճռում «ՀՀ Վճռաբեկ դատարանի Արմեն Սարգսյանի վերաբերյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Օհանյանի վերաբերյալ քրեական գործով ամբաստանյալի մեղադրանքի հիմքում դրված Տոքսիկոքիմիական փորձաքննությունների թիվ 14-2255 և 14-2258 եզրակացությունները՝ գտել է, որ դրանք անթույլատրելի են, քանի որ հիմնված են օրենքի խախտմամբ կատարված

<sup>12</sup> «ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու», հ. 3, Եր., 2001, էջ 195:

<sup>13</sup> Մանրամասն տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Արմեն Սեյրանի Սարգսյանի վերաբերյալ 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵՔԲԴ/0295/01/08 որոշման 15-17-րդ կետերը:

քննչական գործողության և դրա արդյունքում ձեռք բերված ապացույցի վրա:

Դատարանը, հիմք ընդունելով այն փաստը, որ քրեական գործով ամբաստանյալ Օհանյանից և վկա Ա. Մուրադյանից մազի և մեզի նմուշները ստացվել և փորձաքննությունները նշանակվել են օրենքի ակնհայտ և կոպիտ խախտումներով, մասնավորապես՝ կատարվել է ոչ պատշաճ սուբյեկտի կողմից, նմուշներ վերցնելու մասին որոշումները կայացվել, այնուհետև փորձանմուշները վերցվել և արձանագրությունները կազմվել են քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների ակնհայտ և կոպիտ խախտումներով, որոնց ուժող նմուշներ վերցնելու արձանագրությունը և դրա հիման վրա ստացված նմուշներն անթույլատրելի են, ուստի թունավոր ծառի պտուղների սկզբունքով անթույլատրելի են նաև Տոքսիկոլոգիա-միական փորձաքննությունների թիվ 14-2255 և 14-2258 եզրակացությունները, քանի որ բացի այն, որ դրանց կատարման իրավական հիմքը հանդիսացող որոշումը կայացրել է ոչ պատշաճ սուբյեկտը, այլև՝ դրանց բովանդակությունն անմիջականորեն բխում է օրենքի խախտմամբ կատարված նմուշներ ստանալու արձանագրություններից և փորձաքննություն նշանակելու մասին որոշումներից, այսինքն՝ այդ ապացույցները գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ<sup>14</sup>:

Ուշագրավ է նաև այն, որ քննարկվող քրեական գործով փորձագետի եզրակացությունը դատարանն արդարացիորեն գնահատել է փորձագիտական հետազոտման ներկայացված օբյեկտների՝ նմուշների ձեռքբերման հավաստիության տեսանկյունից՝ արձանագրելով, որ անթույլատրելի է ճանաչում փորձագետի եզրակացությունը «նաև այն տեսանկյունից, որ փորձանմուշները վերցվել և փորձաքննությունները նշանակվել են քրեադատավարական օրենքի պահանջների էական խախտումներով»:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փորձագետի եզրակացությունն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս վարույթ իրականացնող մարմինը, ի թիվս այլնի, պետք է հաշվի առնի օրենքով փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջների պահպանվածությունը:

Փորձագետի եզրակացությունը պետք է լինի հիմնավորված, բավարար չափով հստակ և լրիվ:

Այլ խոսքով՝ փորձագետի եզրակացությունում կատարված հետազոտությունների ողջ ընթացքն ու արդյունքները պետք է շարադրվեն ամբողջական և հնարավորին չափ մանրամասն, կատարված հետազոտությունների և հետևությունների միջև պետք է առկա լինի տրամաբանական կապ, բացառվեն իմաստային հակասությունները:

Միայն այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կունենա հասկանալու հետազոտության էությունը և պատշաճ գնահատել դրա արդյունքները: Միևնույն ժամանակ այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը չի համապատասխանում նշված պահանջներին, օրենսդիրը հիմք ընդունելով փորձագետի եզրակացության՝ որպես որոշակի հանգամանքներ հաստատելու համար թույլատրելի ապացույցի անփոխարինելիությունը, վարույթն իրականացնող մարմինն օժտել է այդ պահանջների պահպանումն ապահովելու այնպիսի լծակներով, ինչպիսիք են լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելը, փորձագետին հարցաքննելը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը չի համապատասխանում հիմնավորվածության, բավարար

<sup>14</sup> ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության Առաջին ատյանի դատարանի 2015 թ. հոկտեմբերի 21-ի ԱՐԱԴ1/0010/01/15 դատավճիռը (կետ 1.3.):

չափով հստակության կամ լրիվության պահանջներին, այն չի կարող գնահատել որպես արժանահավատ ապացույց, քանի դեռ օրենքով սահմանված միջոցներով չեն վերացվել այդ խախտումները<sup>15</sup>:

Այսպիսով, կարող են հավաստել, որ ի տարբերություն ապացույցի մյուս տեսակների, փորձագետի եզրակացության պատշաճ և լիարժեք գնահատումը ենթադրում է վերլուծել այն դրա հիմքերի ամբողջականության ու արժանահավատության տեսանկյունից, այլ կերպ՝ փորձագետի եզրակացության գնահատման գործընթացը նպատակահարմար է դիտարկել դրա իրավական (փորձաքննություն նշանակելու մասին որոշման, փորձանմուշներ վերցնելու մասին արձանագրության) և փաստական (նմուշների ու օբյեկտների հավաստիության, պատշաճության, համապատասխանության) հիմքերի հարաբերակցության ու միասնականության մեջ:

Դատավարության մրցակցության, անձի իրավունքների անձեռնմխելիության, իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու, անմեղության կանխավարկածի, դատավարության ցանկացած փուլում իրավաբանական օգնության և պաշտպանության իրավունքի ապահովման սկզբունքների հիմքում ընկած են այնպիսի դատավարական նորմեր, որոնք կարգավորում են քրեական դատավարությունում հատուկ գիտելիքների օգտագործման և, առաջին հերթին, դատական փորձաքննության ինստիտուտը: Քանի որ փորձագետի եզրակացությունը քրեական վարույթի ապացույցներից մեկն է, ուստի դատական փորձաքննության նշանակումը և իրականացումն առնչվում է դատավարության մասնակիցների որոշակի իրավունքների հետ: Բացի դրանից՝ դատական փորձաքննությունը հանդիսանում է օբյեկտիվ տեղեկությունների աղբյուր, որը ստացվում է հատուկ գիտելիքների շնորհիվ: Ուրեմն պետք է խոսել ոչ թե փորձաքննության մրցակցության, այլ քրեական դատավարությանը մասնակցող կողմերի մրցակցության մասին: Դրանից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ փորձաքննության իրականացման ժամանակ կիրառվող մրցակցության սկզբունքի հանդեպ դրական վերաբերմունքը կնպաստի դատավարության բոլոր մասնակիցների հավասարության սկզբունքի անշեղ իրականացմանը:

Հարկ է նշել, որ փորձագետի եզրակացության օգտագործումը քրեական վարույթի ընթացքում անխզելիորեն կապված է մարդու իրավունքների պաշտպանության հետ: Փորձագետի եզրակացության և մարդու իրավունքների պաշտպանության միջև կապը միջնորդավորված է փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակությամբ: Փորձագետի եզրակացությունը քաղաքացիական, վարչական, քրեական, արբիտրաժային կամ այլ գործերով վարույթում, որտեղ քննարկվում են մարդու իրավունքներին և օրինական շահերին առնչվող բազմաբնույթ հարցեր, օգտագործվում է որպես ապացույց, որն այլ ապացույցների հետ համակցությամբ հիմնավորում է մարդու իրավունքների խախտման առկայությունը կամ բացակայությունը, խախտման բնույթն ու ծանրության աստիճանը, հասցված վնասի չափն ու դրա վերականգնման հնարավորությունները և այլն: Այս առումով փորձագետի եզրակացությունն ու մարդու իրավունքները փոխկապված են ապացուցման իրավունքի ինստիտուտի միջոցով, որը կանոնակարգում է փորձաքննության նշանակման և կատարման, ինչպես նաև դրա արդյունքի՝ փորձագետի եզրակացության ձեռքբերման և գնահատման հետ կապված իրավահարաբերությունները՝ որպես քրեական դատավարության նպատակների նվաճման և խնդիրների լուծման միջոցներից մեկը: Ընդհանրացնելով նշենք, որ փորձաքննության նշա-

<sup>15</sup> Արտեմ Արմենի Հարությունյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ3/0226/01/14 որոշում:

նակումը և կատարումը գիտական հետազոտության իրականացում է, որը կատարվում է քրեական գործով փաստական տվյալների բացահայտման նպատակով գործող քրեադատավարական օրենսդրությանը համապատասխան, այն անձանց կողմից, որոնք տիրապետում են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառի վերաբերյալ հատուկ գիտելիքների:

Մասնագիտական գրականության մեջ, քննարկելով փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի տեսակի առանձնահատկությունները, առանձնացվում են երեք հիմնական հատկանիշներ, որոնք բնորոշ են փորձագետի եզրակացությանը՝ որպես ապացույցի առանձին տեսակ: Դրանք են. նախ եզրակացությունը տրվում է գիտական հետազոտություն կատարելու արդյունքում, ուստի նման հետազոտությունը կատարվում է միայն հատուկ գիտելիքներով օժտված անձի կամ անձանց կողմից, այսինքն՝ կիրառվում են հատուկ գիտելիքներ և, վերջապես, ապացուցողական տեղեկատվությունը տրվում է եզրակացություն՝ գրավոր ակտ կազմելու միջոցով<sup>16</sup>:

Միևնույն ժամանակ՝ գոյություն ունի նաև տեսակետ, համաձայն որի՝ թեև փորձագետի եզրակացությունը վերը նշված հատկանիշներով պայմանավորված ապացույցի մյուս տեսակների շարքում ունի որոշակի առավելություններ, այնուամենայնիվ դա հիմք չէ փորձագետի եզրակացությունը ապացույցի մյուս տեսակների նկատմամբ գնահատել որպես առավելություն ունեցող հատուկ, բացառիկ ապացույց<sup>17</sup>:

Կարծում ենք՝ չի կարելի չհամաձայնվել նման տեսակետի հետ, քանի որ թեև օրենսդրությամբ սահմանված ապացույցի տեսակներից որևէ մեկն արժանահավատությունը որոշակիորեն երաշխավորող առանձնահատկություններ ունի, սակայն դա չի կարող ընդհանուր առմամբ այդ ապացույցին առավելություն տվող հանգամանք դիտվել: Մեր կարծիքով՝ յուրաքանչյուր ապացույցի արժեքը կարող է ի հայտ գալ միայն այլ ապացույցների համակցությամբ դրա գնահատման արդյունքում: Այլ հարց է, որ որոշակի գործերով փորձագետի եզրակացությունը կարող է վճռորոշ դեր խաղալ գործի քննության ընթացքի և ընդհանրապես դրա բացահայտման համար: Մասնավորապես՝ կեղծ փաստաթղթեր պատրաստելու վերաբերյալ գործերի քննության ժամանակ փորձագետի կողմից փաստաթղթի տեքստի սկզբնական բովանդակության փոփոխման փաստի հատկանիշների հայտնաբերումը հիմնական նշանակություն ունի այլ ապացույցների հետ մեկտեղ կեղծարարության փաստն ապացուցելու համար: Ասվածը հիմնավորվում է նաև Վերաքննիչ դատարանում կատարած գործերի ուսումնասիրության արդյունքներով: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ փաստաթղթերի կեղծման համար մեղադրանքի ապացուցման հիմքում դատարանը հիմնական գնահատականը տալիս է փորձագետի տված եզրակացությանը, որով հաստատվում է դրանում կատարված փոփոխությունների փաստը:

Ընդհանրապես փորձագետի եզրակացությունն ապացույցի մյուս տեսակների նման պետք է վստահություն ներշնչի, որը կարող է ապահովվել միայն հետազոտման ընթացքի շարադրման պարզության, մատչելիության, ինչպես նաև հետևությունների գիտական հիմնավորվածության, արժանահավատության և փաստարկվածության դեպքում: Այս իմաստով կարևոր են համարում ընդգծել, որ փորձագետը հետազոտման արդյունքները շարադրելիս ընդհանրապես պետք է ձեռնպահ մնա առանց անհրաժեշտության հատուկ հասկացություններ ու եզրույթներ, օտարահունչ բառեր կիրառելուց, որպեսզի հետագայում եզրակացության

<sup>16</sup> Տե՛ս *Давтян А. Г.*, Экспертиза в гражданском процессе, М., «Спарк», 1995, էջ 67:

<sup>17</sup> Տե՛ս *Треушников М. К.*, Оценка отдельных видов доказательств по гражданским делам, Советская юстиция № 1, 1985, էջ 24:

բովանդակության վերաբերյալ տարակարծություններ չառաջանան: Ավելացնենք, որ բոլոր դեպքերում կիրառվող տարբեր բնագավառների հատուկ գիտելիքներով պայմանավորված՝ եզրակացության մեջ կարող են օգտագործվել այդ բնագավառի հատուկ եզրույթներ ու արտահայտություններ:

Այս իմաստով «փորձագիտական լեզուն» անընդհատ կատարելագործման կարիք ունի:

Փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակությունը քննարկելիս անհրաժեշտ են համարում որոշակիորեն անդրադառնալ նաև փորձագետի հավանական եզրակացության ապացուցողական նշանակության հարցին:

Հայտնի է, որ կրիմինալիստիկական, դատափորձագիտական և դատավարական գրականության մեջ բազմիցս տարակարծությունների տեղիք է տվել փորձագետի հավանական եզրակացության ապացուցողական նշանակության հարցը<sup>18</sup>:

Ինչ վերաբերում է նշված հարցին, ինչպես հայտնի է, գրականության մեջ արտահայտվել են տարբեր մոտեցումներ:

Առաջին մոտեցման կողմնակիցները գտնում են, որ փորձագետի հավանական եզրակացությունն ունի ապացուցողական նշանակություն, այն նույնպես ապացույց է<sup>19</sup>:

Այս հեղինակների հակառակորդները ժխտում են փորձագետի հավանական եզրակացության ապացուցողական նշանակությունը, իսկ երրորդ խումբ հեղինակները գտնում են, որ փորձագետի հավանական եզրակացությունը կարող է օգտագործվել միայն որպես անուղղակի ապացույց, ուստի՝ ունենալ որոշակի ապացուցողական արժեք: Այսպիսով, ծագում է փորձագետի հավանական եզրակացության ապացուցողական նշանակության որոշման հարցը: Նախ հարկ է նշել, որ հավանականությունը որոշակի տեղեկատվության վրա հիմնված պնդման կամ ենթադրության ճշմարտացիության մեջ գնահատող սուբյեկտի հավատի (ներքին համոզմունքի) աստիճանն է: Ենթադրությունը, պնդումը կամ վարկածն ինքնին կարող է լինել ճիշտ կամ սխալ, արժանահավատ կամ ոչ արժանահավատ: Համոզմունքի հավանականության աստիճանը կախված է այն վարկածներից և տեղեկատվությունից, որոնք օգտագործվում են հետևության հավանականությունը գնահատելու համար: Հետևաբար՝ համապատասխան հետևության կամ պնդման հավանականությունը կարող է այլ կերպ գնահատվել որոշակի փաստական տվյալների օգտագործման դեպքում, իսկ առանց դրանց օգտագործման՝ այլ կերպ: Կարծում ենք՝ փորձագետի հավանական եզրակացության ապացուցողական նշանակության բացառման մոտեցումն արդարացի չէ: Իմ կարծիքով՝ փորձագետի հավանական եզրակացությունը գործով կարող է ունենալ որոշակի ապացուցողական նշանակություն և օգտագործվել որպես անուղղակի ապացույց: Բանն այն է, որ ինչպես փորձագետի որոշակի (կատեգորիկ)՝ հաստատող կամ ժխտող, այնպես էլ հավանական եզրակացությունը գնահատվում է ապացույցների ամբողջ համակցությամբ: Քրեադատավարական, վերն արդեն քննարկված պահանջի համաձայն՝ ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Այսպիսով՝ փորձագետի եզրակացությունը, անկախ հավանական կամ որոշակի լինելուց, պետք է համադրվի գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ և գնահատվի ապացույցների ամբողջ համակցությամբ: Իհարկե, այլ հարց է, որ փորձագետի հավանական եզրակացությունը, վարույթն իրականացնող մարմնին վիճելի փաստի վերաբերյալ ներքին համոզման հանգեցնելու հնարավորության տեսանկյունից, ավելի «թույլ» է, քան որոշակի եզ-

<sup>18</sup> Տե՛ս *Давтян А. Г.*, Экспертиза в гражданском процессе, М., 1995, էջ 73; *Уголовный процесс*, Под общей ред. К. Ф. Гуценко, М., 1996, էջ 125; *Безлепкин Б. Т.*, Уголовный процесс России, Общая часть и досудебные стадии (курс лекции), М., 1998, էջ 104:

<sup>19</sup> Տե՛ս *Сахнова Т. В.*, Судебная экспертиза, М., 2000, էջ 251:

րակացությունը: Այս առումով, ինչպես դիպուկ նշում է Լ. Պ. Օհանյանը՝ «որոշակի և հավանական եզրակացությունների միակ տարբերությունն այն է, որ որոշակի եզրակացությունը վարույթն իրականացնող մարմնին ավելի է մոտեցնում որոնվող ճշմարտությանը»<sup>20</sup>:

Այսպիսով՝ հավանական եզրակացությունը, ինչպես և որոշակին, նույնպես կարող է գործով օգտագործվել որպես գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ ներքին համոզմունք ձևավորելու միջոց գնահատող սուբյեկտի համար: Օրինակ, երբ հեղինակագետ-փորձագետը եզրակացության հետևությունների մասում նշում է, որ հավանական է, որ վիճելի տեքստի հեղինակը կասկածյալն է (այսինքն՝ հավանական է նաև, որ վիճելի տեքստի հեղինակը կասկածյալը չէ), ճանաչողական առումով ապացուցողական նվազ նշանակություն ունի, քան այն եզրակացությունը, որտեղ փորձագետը որոշակի կերպով հետևություն է անում տեքստի որոշակի հեղինակի մասին: Այնուամենայնիվ հեղինակագետ-փորձագետի հավանական եզրակացության մեջ շարադրված ենթադրական դատողությունները կարող են գործով օգտագործվել որպես տեքստի հեղինակի կամ դրա կատարման հանգամանքների և պայմանների վերաբերյալ անուղղակի ապացույցներ: Ապացույցների տեսությունից հայտնի է, որ ապացույցներն ուղղակիի և անուղղակիի բաժանելու համար հիմք է այն հանգամանքը, թե տվյալ ապացույցը հնարավորություն է տալիս փաստերի գոյության կամ բացակայության մասին անելու միայն որոշակի, թե մի քանի հավանական հետևություններ: Ընդ որում՝ անուղղակի ապացույցները միշտ էլ ապացուցողական փաստերի հայտնաբերման միջոց են, իսկ ուղղակիներն այն փաստերի, որոնք մտնում են ապացուցման առարկայի մեջ<sup>21</sup>:

Այլ կերպ ասած՝ ապացուցողական փաստերը դատավարությունում իրավաբանական չհամարվող փաստեր են, միջանկյալ փաստական տվյալներ, որոնք իրենց համակցությամբ վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն են տալիս հանգելու որոշակի ներքին համոզմունքի գործի համար նշանակություն ունեցող իրավաբանական՝ նյութաիրավական և դատավարական փաստերի գոյության կամ բացակայության կապակցությամբ: Ընդ որում՝ ապացուցողական փաստերից յուրաքանչյուրն առանձին վերցրած, չի կարող ինքնուրույն հաստատել գործի լուծման համար նշանակություն ունեցող այս կամ այն հանգամանքը, սակայն մի քանի ապացուցողական փաստերի հաստատումը համապատասխան անուղղակի ապացույցների օգտագործմամբ հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին կամ դատարանին հնարավորություն է ընձեռում որոշակի հետևության հանգելու գործով իրավաբանական փաստերի մասին: Հետևաբար՝ փորձագետի հավանական եզրակացությունը գործով կարող է օգտագործվել որպես անուղղակի ապացույց՝ հայտնաբերելու և հաստատելու համար մի շարք միջանկյալ, ապացուցողական փաստեր, որոնք էլ իրենց հերթին կարող են օգտագործվել գործով ճշմարտությունը բացահայտելու համար:

### Եզրակացություն

Փորձագիտական գործունեությունը սերտորեն կապված է ապացուցման գործընթացի, այն է՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելու, ստուգելու և գնահատելու հետ, որն իրականացվում է հատուկ գիտելիքների կիրառմամբ՝ փորձագիտական եզրակացություն տալու միջոցով: Փորձաքննության արդյունք հանդիսացող փորձագիտական եզրակացությունը՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, գնահատվում է վարույթն

<sup>20</sup> Տե՛ս Օզանյան Լ. Պ., Вероятное заключение эксперта в системе доказательств, Ереван, 1970, էջ 10:

<sup>21</sup> Տե՛ս Դիրանդյան Ս., Հարությունյան Ա., Ղազինյան Գ. և ուրիշներ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության իրավունք, ընդհանուր մաս, Երևան, 2002, էջ 268:

իրականացնող մարմնի կողմից, որն իրականացվում է ապացույցների գնահատման ընդհանուր կանոններով՝ հաշվի առնելով ապացույցի այս տեսակի առանձնահատկությունները: ՀՀ քրեական դատավարությամբ սահմանված է՝ «Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից»:

Փորձագետի եզրակացության գնահատումը ենթադրում է որոշակի գործով վարույթն իրականացնող մարմնի մոտ ներքին համոզմունքի ձևավորում եզրակացության գիտական հիմնավորվածության և արժանահավատության, ինչպես նաև դրանում արված հետևությունների ապացուցողական նշանակության վերաբերյալ: Մեր կարծիքով՝ փորձագետի եզրակացության գնահատումը կարելի է սահմանել որպես հետաքննության մարմնի, քննիչի, դատարանի կամ դատախազի մտավոր տրամաբանական գործունեություն, որի արդյունքում գնահատող սուբյեկտի մոտ ձևավորվում է ներքին համոզմունք եզրակացության թույլատրելիության, վերաբերելիության, արժանահավատության, գիտական հիմնավորվածության վերաբերյալ, հետևություններ են արվում գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման գործում փորձագետի եզրակացության մեջ շարադրված փաստական տվյալների դերի և նշանակության մասին: Փորձագետի եզրակացության գնահատման հարցում հատկապես կարևոր նշանակություն ունի գնահատող սուբյեկտի մոտ ներքին համոզմունքի ձևավորումը: Մասնագիտական գրականության մեջ ներքին համոզմունքը դիտվում է որպես ապացույցների գնահատման մեթոդ, հնարք, սկզբունք, որպես գնահատման չափանիշ կամ արդյունք: Ընդ որում՝ որոշակի անհայտ փաստը փորձագետը պարզում է իրեն հայտնի այլ փաստերի հետազոտության արդյունքում՝ իր ներքին համոզմունքին համապատասխան:

Վարույթն իրականացնող մարմինը, իր հերթին, ներքին համոզման է գալիս փորձագետի եզրակացությունը գործով որպես ապացույց օգտագործելու վերաբերյալ:

Փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի օգտագործումը գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման նպատակով էապես կախված է հաջորդ տարրի՝ եզրակացության արժանահավատության և գիտական հիմնավորվածության գնահատումից: Վերջինն էլ, իր հերթին, հիմք է հանդիսանում ապացույցի այս աղբյուրի ապացուցողական նշանակության գնահատման համար:

Փորձագետի եզրակացության մեջ շարադրված հետևությունները կարող են լինել ճիշտ, այսինքն՝ համապատասխանեն օբյեկտիվ իրականությանը, սակայն հիմնավորված չլինեն: Միևնույն ժամանակ, այդ հիմնավորվածությունը պետք է լինի գիտական, քանի որ համապատասխան հետևությունների հանգելու համար փորձագետն օգտագործում է որոշակի բնագավառի հատուկ գիտելիքներ: Պարզ ասած՝ փորձագետի եզրակացության արժանահավատության գնահատումը, ըստ էության, իրականացվում է առաջին հերթին դրա գիտական հիմնավորվածության գնահատման ճանապարհով: Այս առնչությամբ տեղին է հիշատակել Տ. Վ. Սախնովայի մոտեցումը, որը եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատումը դիտում է որպես եզրակացության արժանահավատության գնահատման բաղկացուցիչ մաս: Նրա կարծիքով՝ «Գնահատել փորձագետի եզրակացության արժանահավատությունը՝ նշանակում է գնահատել փորձագետի հետևությունների համապատասխանությունն իրականությանը և այս տեսանկյունից՝ փորձագետի կողմից կիրառված մեթոդիկայի հուսալիությունը»: Ընդ որում, եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատումը՝ եզրակացության արժանահավատության գնահատման բաղադրատարր դիտելու մոտեցումը հատկապես ընդունված է քրեադատավարական դոկտրինայում:

Եզրակացության արժանահավատության գնահատման բովանդակությունը ներառում է

նաև կիրառված մեթոդների հուսալիությունը, իսկ կիրառված մեթոդների հուսալիությունն, ինքնին, ինչպես կներկայացվի ստորև, եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման չափանիշներից է: Ընդ որում, գրականության մեջ, հաշվի առնելով փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության և արժանահավատության փոխադարձ կապն ու փոխալսմանավորվածությունը, շատ դեպքերում գիտական հիմնավորվածության փոխարեն օգտագործվում է «գիտական արժանահավատություն» եզրույթը:

Այսպիսով կարելի է արձանագրել, որ փորձագետի եզրակացության արժանահավատությունից է կախված փորձագետի եզրակացությունը հետազայում որպես ապացույց օգտագործելու հնարավորությունը, որն էլ իր հերթին էական և առանցքային նշանակություն կարող է ունենալ քրեական վարույթով վերջնական որոշում կայացնելուն:

**Ամփոփազիր:** Փորձագիտական գործունեությունը սերտորեն կապված է ապացուցման գործընթացի, այն է՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելու, ստուգելու և գնահատելու հետ, որն իրականացվում է հատուկ գիտելիքների կիրառմամբ՝ փորձագիտական եզրակացություն տալու միջոցով: Փորձաքննության արդյունք հանդիսացող փորձագիտական եզրակացությունը՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, գնահատվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից, որն իրականացվում է ապացույցների գնահատման ընդհանուր կանոններով՝ հաշվի առնելով ապացույցի այս տեսակի առանձնահատկությունները:

Փորձագետի եզրակացության գնահատումը ենթադրում է որոշակի գործով վարույթն իրականացնող մարմնի մոտ ներքին համոզմունքի ձևավորում եզրակացության գիտական հիմնավորվածության և արժանահավատության, ինչպես նաև դրանում արված հետևությունների ապացուցողական նշանակության վերաբերյալ:

Փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի օգտագործումը գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման նպատակով էապես կախված է հաջորդ տարրի՝ եզրակացության արժանահավատության և գիտական հիմնավորվածության գնահատումից:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ փորձագետի եզրակացության արժանահավատությունից է կախված փորձագետի եզրակացությունը հետազայում որպես ապացույց օգտագործելու հնարավորությունը, որն էլ իր հերթին էական և առանցքային նշանակություն կարող է ունենալ քրեական վարույթով վերջնական որոշում կայացնելուն:

**Annotation.** Expert activity is closely related to the process of proof, that is, to gathering, analyzing and evaluating evidence in order to reveal circumstances that are important for the legal, justified and fair resolution of the case, which is carried out by giving an expert opinion applying special knowledge. The expert opinion resulting from the examination, as an independent type of evidence, is estimated by the body conducting the proceedings, which are carried out according to the general rules of evidence assessment, taking into account the specifics of this type of evidence.

The estimation of the expert's conclusion implies the formation of an internal conviction by the body conducting the proceedings in a certain case regarding the scientific validity and credibility of the conclusion, as well as the evidential significance of the conclusions made in it.

The use of an expert's opinion as evidence for the purpose of revealing circumstances relevant to the case essentially depends on the evaluation of the next element, the credibility and scientific validity of the opinion.

Thus, it can be noted that the possibility of using the expert's conclusion as evidence depends on the credibility of the expert's conclusion, which in turn can have a significant and central importance in making a final decision in criminal proceedings.

**Аннотация.** Экспертная деятельность тесно связана с процессом доказывания, т.е. со сбором, анализом и оценкой доказательств с целью выявления обстоятельств, имеющих важное значение для законного,



обоснованного и справедливого разрешения дела, которое осуществляется путем применения специальных знаний, предоставленных в экспертном заключении. Экспертное заключение, полученное в результате экспертизы, как самостоятельный вид доказательств, оценивается органом, ведущим производство, что осуществляется по общим правилам оценки доказательств с учетом специфики этого вида доказательств.

Оценка заключения эксперта предполагает формирование у органа, ведущего производство по конкретному делу, внутреннего убеждения относительно научной обоснованности и достоверности заключения, а также доказательной значимости сделанных в нем выводов.

Использование заключения эксперта в качестве доказательства в целях выявления обстоятельств, имеющих значение для судебного дела, существенно зависит от оценки следующего элемента – достоверности и научной обоснованности заключения.

Таким образом, можно отметить, что возможность использования заключения эксперта в качестве доказательства зависит от достоверности данного экспертом заключения, что, в свою очередь, может иметь существенное и центральное значение при принятии окончательного решения в уголовном судопроизводстве.

**Բանալի բառեր** - *ապացույց, փորձագետի եզրակացություն, փորձագետի կարծիք, քրեական դատավարություն, ապացույցի արժանահավաստություն, թույլատրելի ապացույց, վերաբերելի ապացույց, դատական փորձաքննություն:*

**Keywords:** *evidence, expert conclusion, expert opinion, criminal legal proceedings, dignity of evidence, to sanction of evidence, relevant evidence, juridical examination.*

**Ключевые слова:** *доказательства, заключение эксперта, мнение эксперта, уголовный процесс, достоверность доказательств, допустимые доказательства, соответствующие доказательства, судебная экспертиза.*

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դ. Մելքոնյան, Ապացույցների թույլատրելիության եվրոպական չափանիշները, «Պետություն և իրավունք», № 4 (42), 2008:
2. Դիլբանդյան Ա., Հարությունյան Ա., Ղազինյան Գ. և ուրիշներ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության իրավունք:
3. «ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու», հ. 3, Եր., 2001:
4. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Արմեն Սեյրանի Սարգսյանի վերաբերյալ 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵՔԴԴ/0295/01/08 որոշում:
5. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Արայիկ Օնիկի Խաչատրյանի 2015 թվականի մարտի 27-ի ԿԴԴ/0006/01/14 որոշում:
6. ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015 թ. հոկտեմբերի 21-ի ԱԴԱԴԴ/0010/01/15 դատավճիռը:
7. Արտեմ Արմենի Հարությունյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ3/ 0226/01/14 որոշում:
8. Соколовский З. М., Оценка заключений криминалистической экспертизы письма, М., 1959.
9. Белкин Р. С. , Собрание, исследование и оценка доказательств. М., 1966.
10. Оганян Л. П., Вероятное заключение эксперта в системе доказательств, Ереван, 1970.
11. «Судебно-почерковедческая экспертиза», М., 1971.
12. Треушников М. К., Оценка отдельных видов доказательств по гражданским делам, Советская юстиция № 1, 1985.

13. Давтян А. Г., Экспертиза в гражданском процессе, М., 1995.
14. Давтян А. Г., Экспертиза в гравданском процессе, М., «Спарк», 1995.
15. Давтян А. Г., Экспертиза в гражданском процессе, М., 1995.
16. Уголовный процесс, Под общей ред. К. Ф. Гуценко, М., 1996.
17. Безлепкин Б. Т., Уголовный процесс России, Общая часть и досудебные стадии (курс лекции), М., 1998.
18. Саханов Т. В., Судебные докозательства, М., 2000.
19. Сахнова Т. В., Судебная экспертиза, М., 2000, էջ 251.
20. Новик В. В. Криминалистические аспекты доказывания по уголовным делам: проблемы теории и практики. СПб., 2005.
21. Галяшина Е. И. Назначение, производство и оценка заключения судебной экспертизы // [http://www.rusexpert.ru/books/cena\\_slova3/029.htm](http://www.rusexpert.ru/books/cena_slova3/029.htm) (20.04.2010).

**Ավագյան Ի.** - «Մասնավոր իրավական կենտրոն» փաստաբանական գրասենյակի հիմնադիր-տնօրեն, փաստաբան, էլ. հասցե՝ [ingaavagyan@gmail.com](mailto:ingaavagyan@gmail.com):

Ներկայացվել է խմբագրություն 09.11.2023 թ., տրվել է գրախոսության 09.11.2023 թ., երաշխավորվել է ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, Հայ-Ռուսական համալսարանի պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան Ս. Ավետիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.01.2024 թ.: